

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ
XVI—XVII ԴԱՐԵՐԻ ՏԱՂԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԵՎ ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԸ

Մ. Թ. ԱՎԳԱՒԵՆԳՅԱՆ

XVI դարի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցուց մինչև նազաշ Հովնաթանը հայ գրականությունը նշանակալից զեմքեր շտվեց. հրապարակ եկան բազմաթիվ հայտնի ու անհայտ հեղինակների մեծ ու փոքր ստեղծագործություններ, որոնց գերակշիռ մասը գրականության մեջ նորություն չբերող, սակայն միջնադարյան տաղերգության ավանդները պահպանող նմուշներ էին, հայ գրականության մեջ արդեն արժարժված հույների, զգացումների ու մտորումների առավել կամ պակաս հաջող կրկնություններ: Երանք մեր տաղերգության շարունակությունն էին, բայց ոչ երբևից նոր աստիճանը: Սիրո տաղերը, բնության, ծաղկունք-հավքերի գովքը, աշխարհի արդար ստեղծման տարակուսանքն ու սլանդիստի հայրենակսկիծ երգերը, — այս ամենը սկզբից արդեն կազմել են հայ միջնադարյան տաղերգության ոգին, միայն քողարկված այլաբանությամբ կամ արտահայտված տողամեջ: XVI—XVII դարերում դրանք ստանում են բացորոշ արտահայտություն, որը և հավաստում է հայ գրականության աշխարհականացման պատմական առաջընթաց ուղին:

Սակայն, սրանց կողքին ու սրանց զուգահեռ, այդ միևնույն ժամանակահատվածում գրականություն են մուտք գործում ոչ սակավաթիվ այնպիսի ստեղծագործություններ, որոնք թեև արտաքուստ չեն պահպանում հայ տաղերգության գեղեցիկ ավանդները՝ թե՛ բանաստեղծական կերտվածքի և թե՛ բովանդակության առումով, սակայն, այսուհանդերձ, հանդիսանում են հայ միջնադարյան տաղերգության օրինաչափ հետնորդներն ու ժառանգորդները, որոնք մեկ աստիճանով ավելի մոտեցնում են միջնադարյան տաղերգությունը հայ նոր գրականությանը և կազմում այդ երկուսը միացնող անհրաժեշտ օղակներից մեկը: Խոսքը վերաբերում է այդ թվականներին գրականության մեջ ներթափանցած երգիծական երգերին իբրև գրական նոր տեսակի, մասնավորապես՝ դավեջտի երգերին, որոնք անտեսվել են կամ դուրս մնացել ուսումնասիրողների ուշադրությունից, մերթ՝ իբրև գեղարվեստական առումով անարժեք գործեր, մերթ՝ որպես գաղափարազուրկ, անբովանդակ երգեր:

Մեր նպատակից դուրս համարելով XVI—XVII դարերի տաղերգության բնահանուր վերլուծությունը, կանգ առնենք ոչ մեծաքանակ այդ տաղերի վրա, որոնք սարբերվում են միջնադարյան հեղինակների ստեղծագործություններից լեզվա-արտահայտչական միջոցներով ու բովանդակությամբ և կազմում են այն նորը, որը թեև վաղուց հարազատ էր ժողովրդին բանահյուսական ձևով, բայց գրականության առարկա է դառնում տակավ առ տակավ XVI դարից սկսած միայն:

Հին գրականության հետ առնչվող ամեն մի մարդու ծանոթ են այն մտորումներն ու ներքին տառապանքը, որ վերապրել էր Կորյունը իր ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի կյանքը նկարագրելիս: Ներքուստ անվերապահ համոզված լինելով, որ Մեսրոպ Մաշտոցը մեկն է այն երանելի հայրերից, որոնց կյանքի պատմությունը՝ վարքը, պետք է ավանդվի սերունդներին ի դաստիարակություն, այնուամենայնիվ, նա վարանում էր այդ քայլին դիմել, սուսաբելով մտերիմների խորհուրդներին ու մեծավորի համաձայնությանը. նա վախենում էր սրբապղծություն կատարած լինել՝ մահկանացու մարդու կյանքը վարքագրության նյութ դարձնելով:

Այդ մեր գրականության սկիզբն էր:

Քրիզոր նարեկացին առաջինը սիրտ բացեց աստծու առաջ, «ի խորոց սրտի» հառաչանքի ձայներ արձակեց և անձնական քնարերգության ճանապարհ բացեց: Հոգու և մարմնի անհաշտելի պայքարում մոմի պես հալվեց Կոստանդին Նրզնկացին, «անփարատ խափար» զնաց Խաչատուր Կեչառեցու «հրեղեն յողին», Ջրիկը խելահեղ ըմբոստացավ բնության ու աշխարհի անարդարությունների դեմ, Մկրտիչ նազաշը, Թլկուրանցին ու Աղթամարցին, իրենց ուղեկից բանաստեղծներով, բացեցին իրենց հողիները աշխարհի ու մարդկանց առաջ:

Այս հայ գրականության աշխարհականացման դարաշրջանն էր:

Գրականության հաջորդ հանգրվանը պիտի լիներ գրականության մերձեցումը ժողովրդին՝ գրականության դեմոկրատացումը: Դեպի այդ տանող մի ճանապարհը ժողովրդի մտորումների արտահայտությունն էր, որ արդեն տեղ էր դրել մեր տաղերգության մեջ հանձինս Ջրիկի մեկ-երկու բանաստեղծության, իսկ մյուսը՝ ժողովրդի կյանքի, առօրյայի ներթափանցումն էր գրականության մեջ: XVI դարից է, որ մեր ձեռագրերում հանդիպում ենք ժողովրդի ծանր առօրյային ուղեկից զավեշտի երգերին, որոնք իրենց գեղջուկ անմիջականությամբ որոշ թարմություն են բերում գրականության մեջ, միջնադարյան հեծեծանքներին հակադրելով ժողովրդի հումորը՝ իրրե նրա կենսահաստատ փիլիսոփայության արտահայտություն: Խոսքը սոցիալական բովանդակություն ունեցող երգիծական երգերի մասին չէ միայն, այլև զավեշտի, կամ ինչպես իրենք՝ հեղինակներն են անվանել՝ «ծիծաղական» երգերի մասին, որոնք միշտ ուղեկցել են ժողովրդին իր կյանքի դառնուրախ օրերին, բայց գրականության նյութ են դարձել միայն այդ ժամանակներից սկսած: Այս երգերում գրականությունն այնքան է կյանքին մոտեցել կամ ժողովրդի կյանքն այնքան է գրականության մեջ մտել, որ ստեղծվում են զավեշտական երգեր «հարիսայի», «խաղողի», «չախուփ», «ակոռայի» և այլնի մասին:

Մինաս Թոխաթցու «Վասն հերիսի» տաղը մի հիպերբոլիկ զավեշտ է հարիսայի մասին: Զավեշտ առաջացնողը ոչ միայն քաղցած կամ շատակեր մարդու ախորժակի արտահայտությունն է, այլև հարիսային տրված գովեստներն ու բնութագրումները, նրա շափաղանցված նշանակությունը:

Վարդապետաց դասք ամենայն,
Կրօնաւորքն միարան,
Յորժամ լսեն զհերիսան
Ամենեքեան զվանքն ուրանան:

Երիցսականքն ամենայն
 Զերիցկնոջն թարկն տան,
 Զամէն ուսումն մոռանան,
 Վաղկն և երթան ի հէրխան...¹ և այլն:

Միջնադարյան տաղերի ընդհանուր տեղիներով գրված այս տաղը զավեշտական է դասուում փոքր կենցաղային նյութին մեծ բնույթ տալով:

Եւ որ ասէ մեզ ողորմի...
 Արժան լինի հերխայի
 Եւ մատուցման պատարագի²:

Իր իմաստով հարխայի այս ճաշակումն էլ կյանքը վայելելու արտահայտություններից մեկն էր, որ XVII դարում ավելի բարձր արվեստով պիտի ամբողջացնէր Նազաշ Հովնաթանը:

Առէք կարմիր դինի և լցէք շուշով,
 Բերէք թագայ դառն՝ սինի սարփուշով,
 Դարլի փլու ձղէք մեխակով, նուշով
 Խմենք, Էդրարք, դինի
 Բանն աստուած շինի...³

Զավեշտի արտահայտություններից է և Մարտիրոսի «Վասն շախուխ» տաղը:

Սիրտս ի փոքս զողայր ահուս,
 Զեռուս ի բան շերթար վախուս,
 Թէ ինչ ճուղաղ տի տամ պապուս,
 Որ կորուսեր Եմ գիմ շախուս...

Զախուս ի հետս էր խիստ գթով,
 Բալի խրատ կուտայր սիրով,
 Թէ մի նսախր ի ճարդու քով,
 Որ կշաանաս քիչ մի գինով...

Այս տաղը գրված է իրրև ոտանավոր:

Ի յրնթեռնուն այս տաղիս
 Տամ տուողին շատ ողորմիս...

և վերջում՝

Յաշխարս այլ խենթ չկայր բան գիս,
 Հուասս կալայ անգէտ բանիս,

¹ «XIII—XVII դարերի հայ աշխարհիկ դրականություն (ընտիր նմուշներ)», կազմեց Մ. Մկրչյան, Երևան, 1938, էջ 222 (Մատենադարան, ձև. № 7707, էջ 99, ձև. № 7717, էջ 167):

² Նույն տեղում:

³ Ն ա դ ա շ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 170—171:

Միծղան մարդիկք, նախատեն զիս
Քանի նստին ի մեծ մէճլիս»⁴:

Աստվածատուրի «Վասն խաղողի» տաղի մեջ խաղողի գովքն է արվում, տալով և՛ նրա այլաբանական իմաստները, և՛ ավելի աշխարհիկ-առօրեական նշանակությունը: Հատկապես ուշագրավ է խաղողաքաղի կենցաղային նկարագիրը, մանավանդ՝ կրկնակը.

Այգէսլըներն ելան դիտակ,
Ամառնօրեայ ժամադիտակ.
Աջոյ ձեռին քթոց սալակ.
Ա՛յ լի՛ց ու տո՛ւր
Ա՛յ լի՛ց ու տո՛ւր
Չանուշ գինուդ
Անասլական⁵:

XVI դարի անհայտ հեղինակների ստեղծագործություններից են «Վասն ակոսայի», «Վասն ագռաու» և «Վասն աղվեսի» տաղերը, որոնցից ամեն մեկն ունի իր արժեքը: «Վասն աղվեսի» տաղում հանելուկների նման վերհանված են աղվեսի բնութագրական հատկանիշները: Տաղը զավեշտական է դառնում վարդասլետին ուղղված երգիծանքով.

Աղվեսն ասաց վարդասլետին.
Ջրեզ տի հանեմ վերայ փայտին,
Անցուցանեմ այնդին գետին,
Սիրուն աղվես ագին ծաղիկ⁶:

«Վասն ագռավի» տաղը մի երգիծական փոխաբերություն է այն մարդկանց մասին, որոնք իրենց վեր են դասում ուրիշներից, բայց իրենք են վերջր անարգանքի արժանանում: Հնդինակը դժգոհում է մարդկանց բարքերից ու փոխհարաբերություններից. «Մեր մեղքն է արեր զագռան բազայ», այսինքն՝ մեր մեղքով է, որ ագռավին բազեի իրավունք ենք տվել.

Կտուցն է սրեր սլողսլատ ու նօքտայ
Ը բարձր թռեր կու կանչէ դա՛յ, դա՛յ, դա՛յ,
Որտեղ որ հաւ կայ...
Ագռան է հսլարտ մարդ, որ մէճլիս գայ
Իմաստուն մարդիկքն ի յաչքն ոչինչ գայ.
Թէսլէտ որ լինի նա ծանր ամիրայ.
Տան վերայ գլխոյն, որ լա՛յ, լա՛յ, լա՛յ
Փոշիման երթա՛յ՝:

⁴ Կ. Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու. Բ. պրակ, Թիֆլիս, 1892, էջ 33—34 (Մատենադարան, ձեռ. № 33, էջ 156, ձեռ. № 8968, էջ 174բ):

⁵ Նույն տեղում, էջ 42 (Մատենադարան, ձեռ. № 3595, էջ 6, ձեռ. № 1611, էջ 11):

⁶ «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ դրսականություն», էջ 221:

⁷ Կ. Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, էջ 33 (Մատենադարան, ձեռ. № 2676, էջ 197, ձեռ. № 7709, էջ 124բ):

Վերջին երկու տաղերը հրատարակվել են իրրև ժողովրդական երգեր: Մենք, մանավանդ վերջինի մասին, այդ կարծիքին չենք: Սակայն, նույնիսկ եթե ընդունելու լինենք նրանց ժողովրդական լինելը, հենց այն հանգամանքը, որ նրանք տաղարան են մտել իրրև գրական երկ, նույնպես վկայում է, որ այդ թեմաները գրականություն են մուտք գործել XVI դարից:

Երկված նմուշները բավարար զաղափար են տալիս այն ոչ մեծաքանակ ստեղծագործությունների մասին, որոնք նոր բովանդակություն էին մտցնում մեր տաղերգության մեջ և իրրև ամբողջական գրական տեսակ պետք է ձևավորվեին ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ: Անտեսել այս տաղերի նշանակությունը հետագա գրականության ձևավորման պրոցեսում և անցնել սրանց կողքից մի ակնարկով կամ բնութագրությամբ՝ ճիշտ չէ ըստ էության: Խնդիրը ոչ միայն բնութագրման սխալի մեջ է, այլ հարցի մոտեցման, որը, դժբախտաբար, մասնակի երևույթ չէ և բանալի է հանդիսացել մի քանի աշխատություններում տեղ գտած գոհակ-սոցիոլոգիական վերլուծությունների համար:

Գրականության, այն էլ միջնադարյան գրականության, առաջընթացը միշտ չէ, որ չափվում է ուղղակի արժարժած խնդիրներով: Հարցին պետք է մոտենալ պատմականորեն. էականը կոնկրետ ստեղծագործությունների կատարած գերն է, այն, թե ի՞նչ չափով են նրանք խախտել միջնադարյան-եկեղեցական աշխարհըմբռնողությունը, ի՞նչ չափով են հակադրվել իշխող զաղափարախոսությանը: Պետրարկայի քնույշ սիրային երգերը պակաս հարված չհասցրին միջնադարյան զաղափարախոսությանն Իտալիայում, քան Գվելֆների հակամարտությունները: Մի կոստանդին Երզնկացի իր լուսառատ սիրո երգերով նույնքան էր հակադրվում միջնադարյան մտայնությանը, որքան Ֆրիկն իր ըմբոստ երգերով: Հեռավար անձնական քնարերգությունն իսկ պատմական որոշակի ժամանակաշրջանում ստանում է քաղաքական մեծ նշանակություն: Այդպես է և կենցաղագրությունը:

Եթե անձնական քնարերգության առաջացումն ու զարգացումը քաղաքական նշանակություն է ստանում գրականությունների աշխարհականացման ճանապարհին, ապա ժողովրդական կենցաղի, առօրյա կյանքի ու զվարճանքի խաղերը զաղափարական իմաստ են ստանում գրականությունների դեմոկրատացման ճանապարհին: Այդ կենցաղային զավեշտական տաղերը պատմականորեն՝ իրրև հասարակական նշանակություն ունեցող երևույթներ, ոչ թե գրականության վայրէջքն են ասպացուցում, ինչպես սխալ կերպով մինչև այժմ ներկայացվել է այդ շրջանին վերաբերող որոշ ուսումնասիրություններում, այլ հայ գրականության պատմության միանգամայն նոր դարաշրջանի գալուստն են ազդարարում:

Չուտ զավեշտական-կենցաղային ժանրը անսկսվել է ոչ միայն XVI—XVII դարերի հայտնի ու անհայտ հեղինակների ստեղծագործությունները գնահատելիս, այլև այդ գրականությանը հեցած և այն ամբողջացնող հեղինակի՝ Նադաշ Հովնաթանի ստեղծագործությունները բնութագրելիս: Հենց այն հանգամանքը, որ Նադաշի այդ տիպի 17 սաղերից 11-ը առաջին անգամ հրատարակվել են միայն 1951 թ. (հրատարակիչներ՝ Գ. Նադարյան և Ա. Մնացականյան), նման վերաբերմունքի ու գնահատականի ցուցանիշն է արդեն: Այդ տաղերը, եթե ոչ ամբողջությամբ, բայց շիմնական մասով ծանոթ են եղել Ա. Չոպանյանին, սակայն նա հրատարակել է դրանցից միայն 5-ը, տալով հետևյալ բացատրականը. «Երգիծական կտորները տասնեն ավելի են. ասոնց

մեջ կան մեկ քանիներ այնքան կոտորտ և անհամ (համայնաբար՝ ժամանցի թեթևորեն գրված) որ ավելորդ համարեոս հրատարակելի դանոնք, նկատելով, որ այդ այնքան երկար, որքան գոհիկ կտորները բանաստեղծին ավելի վնասել կարող են, քան ունի հրապույր ավելացնել իր դործին: Բայց այդ շարքին այն էջերը, զոր հրատարակած եմ, արժևրե պուրկ չեն, ցույց կուտան սրամտություն մը, որ գեղջուկ ու պարզուկ, բայց համեղ է և մերթ ուժեղ ու կծու»⁸: Ուշագրավն այն է, որ Ա. Չոպանյանը, չհրատարակելով զավելի բոլոր տաղերը, ճիշտ է բնութագրում նրանց հասարակական իմաստն ու նշանակությունը: Բայց նախքան այդ բնութագրմանն անցնելը, վերհիշենք նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունները և հատկապես նրա զավելի երգերը, ամբողջացնելու համար մեր ասելիքը XVI—XVII դարերի գրականության մասին:

Նաղաշ Հովնաթանը թողել է բանաստեղծական հարուստ ժառանգություն՝ մոտ 100 տաղ: Դրանց մի մասը կապված է միջնադարյան գրականության մեծ տարածված խրատական ժանրի հետ: Խրատական տաղերում նաղաշը, ի տարբերություն նախորդ տաղերգուների կրոնա-բարոյական խրատների, քարոզում է առօրյա կյանքում, մարդկային հասարակության մեջ ապրելու գեղեցիկ ու պատշաճ վարքագիծ, մարդասիրություն, ազատասիրություն, իսկ ամենից ավելի՝ աշխատասիրություն: Նաղաշ Հովնաթանը խորագանում է ծուլությունը, անբանությունն ու տգիտությունը: Այդ տաղերն ունեն ճանաչողական նշանակություն, նրանց մեջ արտահայտված են ժամանակի բարդավաճ Շոտթի արհեստավորության կյանքն ու բարքերը: Երիտասարդ սերնդին զիտության և աշխատասիրության ոգով կրթելու մեծ ցանկության հետ մեկտեղ, նաղաշ Հովնաթանը քաջալերում է նաև մարդկանց ընկերասիրությունը, մարդն իր միջավայրով է երջանիկ, կյանքը մարդկանցով է հետաքրքրական: Ամենևին պատահական չէ, որ մեր տաղերգության մեջ նաղաշ Հովնաթանի անվան հետ են կապված խնջույքի և ուրախության տաղերը: Նրա երգերը ազատ են կրոնական մտայնությունից, նա վախ չի զգում հանդերձյալ կյանքի նկատմամբ, սիրում է կյանքը և ուզում է ուրախ ապրել՝

Այս մեջլիսումս տխուր և դառն
մարդ չէ խառն,
Յիշէ՛ք Հովնաթան,
Խմէ՛ք գինի,
Ձեռ անուշ լինի՞:

Նաղաշ Հովնաթանի՝ կերտվումը գովերգող երգերը Ազուլիսի և Շոտթի վաճառականական հարուստ կյանքի ու կենցաղի արգասիք են և արտահայտում են քաղաքարնակ խավերի կենսախինդ արամադրությունները: Այս երգերը նույնպես խստորեն հակադրված են եկեղեցական մտայնությանն ու աշխարհամերժ քարոզին:

Միջնադարյան հայացքից միանգամայն ադատագրված է նաղաշ Հովնաթանը մանավանդ իր սիրո երգերում: Նա շունի նախորդ տաղերգուների տվյալ-

⁸ Ա. Չոպանյան, *Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարչու*, Փարիզ, 1910, էջ 13:

⁹ *Նաղաշ Հովնաթան. Բանաստեղծություններ, ժողովածուն պատրաստեցին՝ Ա. Մնացականյան, Ծ. Նազարյան, Երևան, 1951, էջ 88:*

տանքն ու հոգու խոռովքը. նրա տրտմությունը բխում է միանգամայն այլ ակունքներից: Որքան երջանիկ է նա սիրած կնոջ ներկայությամբ, ներշնչված նրա կենսառատ գեղեցկությամբ, նույնքան տխուր է ու կարոտակեզ նրա բառակայությունից: Բայց մեծ մասամբ նա ուրախ է ու երջանիկ: Ինչպես իր խրատական ու խնջույքի տաղերով, այնպես էլ սիրո երգերով նաղաշ Հովնաթանը թարմություն է մտցնում հայ գրականության մեջ և՛ իր ստեղծագործության բովանդակությամբ, և՛ գեղարվեստական հնարանքների բազմազանությամբ ու ժողովրդայնությամբ:

Ձերմ սիրտ ու պարզ հոգի ունենալու հետ մեկտեղ նաղաշ Հովնաթանն ունեցել է և սուր աչք: Նա նկատել է իր ժամանակի հասարակության արատները, խոջաների հարուստ կյանքն ու աշխատավորության ծանր վիճակը: Իր սրամիտ գրչով նա խարազանել է անբան, մեծամիտ, տգետ ու հավակնոտ խոջաներին ու կրոնավորներին, անմեղ կատակը թողնելով իր համար սիրելի մարդկանց՝ աշխատավորության արատներին ու կենցաղի զավեշտական կողմերին: Նրա երգիծանքն ունի հասարակական նշանակություն: Ոչ ոք հայ միջնադարյան տաղերգուներից չի տվել հայ գեղջկուհու ծանր ապրուստն ու վիճակը ներկայացնող այնպիսի պատկերներ, ինչպիսին տեսնում ենք նաղաշ Հովնաթանի տաղերում: Հասարակական նշանակություն ունեցող երգիծական տաղերից բացի նաղաշն ունի սովորական «ծիծաղական» — զավեշտի երգերի մի ոչ փոքրաթիվ խումբ: Այդ երգերում արտացոլված են կյանքի այնպիսի մանր ու առօրեական երևույթներ, որոնց մուտքը գրականության մեջ արդեն նշան էր, որ հայ գրականությունը հետզհետե փոխում է իր բովանդակությունը՝ մոտենալով ժողովրդական կյանքի արտացոլման դադափարին:

Մեկ առ մեկ կանգ շառնելով զավեշտի բոլոր տաղերի վրա, թվարկենք մի երկուսը: «Տաղ ի վերայ կանանց, գուր նեղուրիւն կրեն ի ձեռաց մեծ պասին և քահրայիս»: այս տաղը իրավացիորեն համարվել է սոցիալ-պատմական նշանակություն ունեցող ստեղծագործություն: Ավելացնենք միայն, որ նաղաշն այս սոցիալական նկարագիրը տվել է ոչ թե ողբերգական շեշտով, այլ երգիծական ասպեկտով, զվարճական հակադրություն ստեղծելով հոգսերի ծանրության և մեծ պասի նախապատրաստման «անհրաժեշտության» միջև:

Խոսվել է նաև Շահվեփտանց Ավետիքին ուղղված տաղի մասին. այստեղ դարձյալ վեր է հանվել տաղի սոցիալական կողմը: Ավելացնենք, որ տաղում կոնկրետացված է հերոսը. դա իրական մարդն է, այս դեպքում իր միջավայրում ճանաչված խոջան, որ զավեշտի առարկա է դառնում ընթերցողների կամ ունկնդիրների համար: Մեծամիտ Ավետիքին այսպես է մերկացնում նաղաշը.

Ո՛չ ժամ, ո՛չ սաղմոս էս ասում,
Ապա է՛ր ևս կանգնած դասում,
Լայիկ ասմաուրբ ևս կարդում
Տես քանի՞ն են քեզ բամբասում...

Հանդիպեցար մարդոյ բարի,
Ես քեզ շատ էլ դիմիշ շարի,
Ձերա էրեց ես, խաթր արի,
Մէկ փոքր էլ կենա դալ տարի¹⁰:

¹⁰ Ն ա դ ա շ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, էջ 113, 115:

Հեղինակը առօրյա հարցերի մասին է խոսում, առօրյա մարդկանց կյանքով է ապրում: «Վարժ Շոռորու տիրացու տխմար տղալոց վերի դասին» և «Անարզան և ևերին դասի մոնրերին» տաղերը ժամանակի միջավայրի մարդկանց հականե-հանվանե ծաղրանկարն են՝ վերին և ներքին դասից անուններ ու բնութագրեր, որոնք մեղ այսօր ոչինչ չեն ասում, բայց իր միջավայրում, անշուշտ, աշխույժ տրամադրություն են ստեղծել:

Մեր Յակոբ շկարաց տեղն դադարի,
Չի թողիլ մնայ քար՝ վերայ քարի.
Ասաւենց Յակոբ բամբասանք ճարի,
էնչափ խոսի, սր ժամն փճարի...

Տէր Մարդարենցն էրբ կու դադարի.
Իւրեան բնկերին շիշ, շամփուր շարի,
Ֆրանկագիւլն աստուծոյ ոչ հաւասարի,
Կարծէ շկայ իւր պէս գիտուն բարի...¹¹

«Վարժ հավասար մոնրերուն» տաղի մասին շատ է խոսվել: Այն մեկ աստիճան բարձր է իր՝ Նաղաշի մյուս զավեշտի տաղերից. այստեղ ընդհանրացման մեծ ուժ կա:

«Խափանցի Լեւցի արած պաշտոն» տաղը տարբեր շարականների ընդհանուր տեղիներով մի ծիծաղական նոր հյուսվածք է.

Հայր անպիտան, բարեխնամ, մարդասէր,
Հանգոյ ըզննջեցեալսն ի սուրբ անունդ քո,
Որ որդիդ ես և բանդ աստուած.
Ջրեղ սրհնեն մանկունք սուրբ եկեղեցոյ...¹²

«Օրհնություն զեղացի Էրեցի» տաղի մեջ նախորդի վերամբարձությունը հակադրված է գյուղացու կենցաղային միջավայրը՝ համապատասխան լեզվով.

Օրհնեսցի շորբանկիւնն
Խեցեղէնն, պղնձեղէնն,
Մկնաուն,
Եղամանն, ձիթամանն...
Գոմն ու մարաքն,
Մածունն ու կարագն...
Տաշտն ու մաղն,
Բիրարն ու աղն,
Կալն ու ջաղացն,
Յորենն ու հացն... և այլն...¹³

Այս հակադրությամբ է Նաղաշ Հովնաթանը զավեշտ առաջացնում:

¹¹ Ն աղ աշ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, էջ 116—117:

¹² Նույն տեղում, էջ 124:

¹³ Նույն տեղում, էջ 126—127:

Նույն՝ ձևի լրջությամբ և նյութի շնչինությունամբ է ստեղծված «Տաղ ի վերայ մածունի, զոր բնծայ բերին Հովնարանին» երգը:

Յանկարծ լուայ աւետեաց ձայն,
Թէ. «Ուրախ լե՛ր, դու, Յովնաթան,
Զի եկեալ է մածուն և թան
Ահաւասիկ զնոսին բեսայն»:
Որպես զոյս արեգական
էր սպիտակ գոյն սիրական,
Անուշ համեղ և սիրական
Որպես խորտիկ արբայական¹⁴:

«Տաղ ի վերայ Ազուլեցի Քումանին, զոր 40 ամաց սկսաւ կարդալ». սա Քիանզամայն հակագիր լեզվով՝ ու ոճով գրված գավէշտ է.

Կրեցի անուն
Վասն Թումանուն,
Կարդալով զանուն,
Փարկալ ու քանուն:

Կարդալն վարդ այ,
Թուման լալ մարդ այ,
Հիմի գրել տայ,
Ետտտանին կարդայ.

Առանց վարդապետ
Ո՛նց դառնայ վարպետ,
Գրինք՝ «Վարապետ»,
Դու կարդայ՝ «կարպետ»¹⁵ և այլն:

Զավեշտական են նազաշ Հովնաթանի տաղերի նույնիսկ վերնադրերը. «Վասն Վարդան ժամահարին, որ վասն իւր քնատ լինելոյն եկեղեցոյն որձակն սպանեց, ասելով թէ «ի՛նչ բան ունես հետ օտար հաւերի», «Տաղ ի վերայ հաւին, զոր բարեկեցեղանին տէր Գրիգորն սեղանէն մեկ հաւ Ետուր ժամահարին, բե մուրբանամ շինէ. ժամհարն առեալ գնաց, գինովցաւ, հաւն գողանալ Ետուր...» և այլն:

Ահա այս տաղերն են, որ Ա. Չոպանյանը շճատարակելով հանդերձ, ճիշտ է բնութագրում, ասելով թէ՛ «Բ՝ վերայ կատուին և մկանցը», «Տաղ ի վերայ մածունին», «Գովասանութիւն Երևանայ քաղաքինը» և մանավանդ «Վարք հաւասար մոնթերինը» տգետ, աղտոտ, կոսլիտ, կովազան փոքրափորներու խայթիչ հեղանակար, շահեկան են՝ ու կրնան նկատվիլ հայ նոր երգիծարանության նախափորձերը Արուստանէն իսկ առաջ»¹⁶: Այնինչ, վերոհիշյալ ժողովածուի հե-

¹⁴ Ն ա ո ա չ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, էջ 128:

¹⁵ Նույն տեղում, էջ 130—131:

¹⁶ Ա. Չոպանյան, նազաշ Հովնաթան աշուղր և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը՝ էջ 13:

ելինակները, միանգամայն ճիշտ բնութագրելով նաղաշի երգիծական տաղերի մի խումբը՝ հասարակական հարցեր շոշափող ստեղծագործությունները, առտեսել են զավեշտական տաղերի նշանակությունը գրականության սլաթմության զարգացման ընթացքի մեջ: Նաղաշի երգիծանքի արժեքը նրանք տեսնում են սոսկ մերկացնող ու քննադատական հատկության մեջ, այն բանի մեջ, որ նաղաշ Հովնաթանը «երգիծարանական ժանրը թեթև զավեշտի մակարդակից բարձրացնում է գեպի հասարակական սոցիալական մակարդակ»¹⁷: Մեր առարկությունը հենց սրա դեմ է: Նաղաշ Հովնաթանի երգիծական ստեղծագործությունները արժեքավոր են իրենց սոցիալական հագեցվածությամբ, բայց և այն բանով, որ ամբողջացնում են հայ տաղերգության մեջ արդեն արտահայտություն գտած մինչնաղաշյան շրջանի զավեշտի երգերի ժողովրդական ոգին և, իրրև գրական նոր տեսակ՝ մուտք գործում հայ միջնադարյան տաղերգության մեջ: Դա ունակիղմի ուրույն ներթափանցումն էր գրականության մեջ: Դրանով նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունը կապվում է մի կողմից՝ XVI դարի տաղերգության հետ, մի նոր աստիճանի բարձրացնելով այն, մյուս կողմից՝ ասլագայի գրականության հետ, թերևս ոչ անմիջականորեն նախապատրաստելով հայ նոր գրականության հիմնադիր խաչատուր Աբովյանի «Պարսպ վախտի խաղալիք» ժողովածուի հրատարակ գալը:

XVI—XVII դարերի, ինչպես և նաղաշ Հովնաթանի զավեշտի տաղերի բանաստեղծական ոչ ավարտուն ձևերը սլաթմառ շղետք է դառնան դրանց թերագնահատման: Դրանք գրականության մեջ արտահայտվող նոր գաղափարների անդրանիկ դրսևորումներն էին, որոնք հող նախապատրաստեցին գալիք բարձրարվեստ ժողովրդային գրականության համար:

ПРЕДПОСЫЛКИ НОВОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ В СРЕДНЕВЕКОВОЙ ПОЭЗИИ XVI—XVII ВЕКОВ И НАГАШ ОВНАТАН

М. Т. АВДАЛБЕКЯН

(Резюме)

Нагаш Овнатан — видный представитель армянской литературы XVII в. Его творчество своим содержанием и богатством художественных приемов значительно отличается от наследия его средневековых предшественников и является шагом вперед к новой армянской литературе. Начавшееся расшатывание средневековых феодальных отношений и наступившее господство подымающегося торгово-купеческого быта в его родной среде породили жизнерадостную поэзию Нагаши Овнатана. В армянской литературе его непосредственные предшественники XVI в. сыграли исторически передовую роль в процессе формирования новой армянской литературы. Они подготовили почву, на которую прочно оперся своим творчеством Нагаш Овнатан, тесно связанный с поэзией XVI в. и протянувший мост к берегам литературы нового времени.

¹⁷ Ն աղ աշ Հ ո վ ն ա թ ա ն, Բ ա ն ա ս տ եղ ժ ո լ ո ս ն եր, էջ 19: